

**153. ՇՆՀԵՐ. կ. ԱՆԱՊԱՏ.** *արևելյան պարսպի բարձր մասում, գրսից ագուցված խաչքարի շրջանակներին.*

ԵՍ Վ.ԱՍԱԳԻ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ ՀԱՒՐ ԵՒ ՄԱՒՐ
ԵՒ ԵՂ.ԲԱՒՐ ԻՄՈ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.

*ՎԱՍԱԳՍ—գրված է ՎՍԱԳՍ.*

**154. ՇՆՀԵՐ.** *գյուղամիջի ս. ՍՏԵՓԱՆՈՍ եկեղեցու արևելյան պատի մեջ ագուցված խաչքարի վրա.*

Ես Արզուս կանգնեցի զխաչս տեառն իմոյ Եզեկի եւ որդւոյ իմոյ
Պապկայ հոգւոյն. յիշեցէք ի Ք̅ս̅. թ̅վ̅. . . . . . . . ԿԱ։

*Թվականի հարյուրավորը ջարդված է. այժմ արձանագրությունը բոլորովին եղծված է։*

*Ալիշան, 258*

## ԽՈՏ

*Հաբանդ գավառի հնագույն գյուղերից է, աղբյուրների մեջ հիշատակվում է 10-րդ դարի սկզբից։ Ստ. Օրբելյանի ցուցակի մեջ գյուղի հարկը նշանակված է 12, որով միջակ գյուղերի շարքում կարելի է դասել։*

*1045 թ. Դլեն Խաղբակյան իշխանը Խոտ գյուղը նվիրել է Տաթևի վանքին, որը կըրկին անգամ վերահաստատել է Տարսայիճ Օրբելյանը՝ 1274 թ., այդպես էր համարվում մինչև 19-րդ դարը։*

*Գյուղի միջին հին հուշարձաններ չկան. գյուղից մոտ մեկ կիլոմետր հեռու դեպի արևմուտք, Շնհեր տանող ճամփի ձախ կողքին գտնվում են իրար կից երկու եկեղեցիների հիմնապատեր և շուրջը գերեզմանատուն։ Այդ գերեզմանատան մեջ կանգնած և ընկած վիճակում կան խաչքարեր և բավական տապանաքարեր, որոնցից մի քանիսի վրա կան արձանագրություններ։*

*Տեղագրական գրականության մեջ այդ արձանագրությունները բացակայում են։*

**155. ԽՈՏ.** *գյուղից արևմուտք. հին գերեզմանատան մեջ կանգնած մի խաչքարի ներքևի մասում. 5 տ.*



ԹՎ. ։Զ։Լ։Ա։ ԵՍ ՇԱՐՎԵՆՇԱՀ [ԵՒ] ՇԱՑ
ԿԱ[Ն]ԳՆԵՑԱՔ ԶԽԱՉԱՍ ԵՂԲԱՒՐ ԻՄ
ՇՐ[Վ]ԱՇԱՀԻ. ՅԻՇԵՑ[Է]Ք Ի ՔՍ.

*Արձանագրության տառերը շատ երեսանց են։ ԽԱՉԱՍ ձևը չենք ուղղում.*

*Լուսանկ. տախտ.* XIV, 51

**156. ԽՈՏ.** *գյուղից արևմուտք, հին գերեզմանատան մեջ, եկեղեցու ավերակների մոտ ընկած մի խաչքարի վրա.*



Թ̅Վ. ։ՁԼԸ։ ԵՍ ԳՆԴԻԿ ՈՒ ՀԱՐԱՑՊԵՏ ԿԱՆԳԵՑԱՔ ԶԽԱՉՍ ՀԱՒՐ ԵՒ ՄԱՒՐ ԵՒ ԱԶԳԻ. ՅԻՇԵՑԷՔ ·Ք̅Ս̅.

*Ծակատի առաջին տողը անունների կրկնություն է. ջարդոտված է։*

*Թվականի մեջ միավորը տասնավորից առաջ դնելու ուրիշ դեպքեր չկան, համարում ենք գրչի շփոթմունք և շտկում ենք։*

*Սղումները չենք լրացնում՝ ենթադրելով խոսակցական լեզվի ազդեցություն։*

**157. ԽՈՏ.** *գյուղից արևմուտք՝ հին գերեզմանատան մեջ կանգնած մի խաչքարի շրջանակներին.*



ԹՎ. ։ՁԾԵ։ ԵՍ ՈՎԱՆԷՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ ՀԱՒՐ ԻՄ ԱՍԱԴԻՆ, ՄԱՒՐ ԻՄ ԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.

*Թվականի հարյուրավոր-Զ-ն անսովոր ձևով է գրված, կարող է -Ջ-կարդացվել. բայց խաչքարի ոճը և այդ միջավայրում նման ձևի-Զ-չլինելը նկատի ունենալով՝ կարդում ենք Զ։*

*Լուսանկ. տախտ.* XV 54

*158. ԽՈՏ. գյուղից արևմուտք. հին գերեզմանատան մեջ ընկած մի խաչքարի ներքևի մասում. 7 տ.*



ՅՍ. ՔՍ. ԵՍ ՄԱՄԱԽԱԹՈՒՆՍ, ՏԱՐՍԱՅԻՑՍ. ՉԱՒՐՍ, ԿԱՆԿՆԵՑԻՆՔ ԶԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՈ ՄՈՒՐԱՏԻՆ, ԻՇԵՑԷՔ։

*Խաչքարն ընկած է պատվանդանի մոտ, որն իր նախնական տեղումն է, և որի առաջ՝ նույնպես նախնական վիճակում՝ գտնվում է մեծ գերեզմանաքար. (տես հաջորդը)։*

*Լուսանկ. տախտ.* XV, 53

*159. ԽՈՏ. նախորդ խաչքարի մոտ մեծ գերեզմանաքարի երեսին. 1 տ.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՄՈՒՐԱՏԻՆ

*Լուսանկ. տախտ.* XV, 53

*160. ԽՈՏ. գյուղից արևմուտք. հին գերեզմանատան մեջ կանգնած խաչքարի ճակատին. 3 տ.*



ԵՍ ԽԻՇԷՆ ԿԱՆԳՆԵՑԻ ՍԲ ԽԱՉՍ ՀԱՄԻՆ.
ԹՎ. ։ՋՀԳ։

*Լուսանկ. տախտ.* XIV, 52

*161. ԽՈՏ. գյուղից արևմուտք. հին գերեզմանատան մեջ կանգնած խաչքարի ճակատին. 3 տ.*



ԿԱՆԿՆԵՑԱՒ ՍԲ ԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹԻ | ՀՈԳՈ ՊԱՐՈՆ ՍԻՄԷՈՆԻՆ. ԹՎ. ։ՊՀԲ։



*162. ԽՈՏ. գյուղից արևմուտք. հին գերեզմանատան մեջ ընկած խաչքարի հյուսիսային շրջանակին և տակը.*

ԵՍ ՎԱՐԴԱՆ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ ՀԱՒՐ
ԵՒ ՄԱՒՐ ԻՄՈ.

*Լուսանկ. տախտ.* XV 59, *(Քերի).*



**163. ԽՈՏ.** գյուղից արևմուտք. հին գերեզմանատան մեջ. ավերակ եկեղեցու մոտ մի տապանաքարի վրա. 4 տ.

ՀԱՆԳԻՍՏ ՍԱԽԹՈՒՄՇԻՆ

## ԽՆՁՈՐԵՍԿ

Այս գյուղի մասին հին տեղեկությունները շատ համառոտ են, Ստ. Օրբելյանը գյուղի անունն է միայն հիշատակում Հաբանդ գավառի ցուցակի մեջ և հարկի չափը՝ 10։

Խնձորեսկը մեկն է Զանգեզուրի այն նշանավոր գյուղերից, ուր հնում տների մեծ մասը այրափոր է եղել—քարատակներ։ Այժմ էլ նորաշեն տների կողքին մնացել են անհամար քարատակներ և մեկ երկու ժայռափոր հասարակ եկեղեցի։

Գյուղում եղած համեմատաբար հին հուշարձանը «Անապատ» կոչվող եկեղեցին է, տեղավորված լեռնաբազուկի փոքրիկ հարթության վրա։ Եկեղեցին կոչվել է ս. Հռիփսիմե. այժմ կիսավեր է, ըստ արձանագրության շինվել է 1663 թ.։

Դավիթ Բեկի մահվանից հետո, կարճ ժամանակով այստեղ ապրեց Մխիթար սպարապետը, պատսպարան ունենալով գյուղի կենտրոնում, ժայռագլխին եղած փոքրիկ բերդը։ Դավաճանաբար սպանվելուց հետո թաղվեց Անապատի բակում, եկեղեցու հյուսիսային կողմում, ուր և մնում է նրա գերեզմանաքարը։ Սպարապետի գերեզմանը փորփրված է, քարը շարժված, բայց իր տեղումն է։

Այստեղ է թաղված նաև Զանգեզուրի վերջին մելիքներից՝ Բարխուդարը, որի գերեզմանը եկեղեցու հյուսիսային պատի տակն է։ Մելիքի գերեզմանաքարը թեև ավելի մեծ է, բայց իր ձևով ու քանդակներով, նաև գրչությամբ խիստ նմանեցված է սպարապետի գերեզմանաքարին։

**164. ԽՆՁՈՐԵՍԿ. ԱՆԱՊԱՏ.** ս. Հռիփսիմեի եկեղեցու հյուսիսային մուտքի կամարակալ քարին. արտաքուստ. 5 տ.



Թ̅Վ. ։ՌՃԺ։։ ԵՒ ։Բ։ ԷՐ | ՅԻՇԱՏԱԿ Է Ս̅Բ ՀՌԻՓՍԻՄԱ ԵԿԵՂԵՑԻՍ. ԵՍ ԳԻԶՈՒԻ ՈՐԴԻ ԹՈՒԹԱ|ԿՍ ՇԻՆԵԼ ՏՈՒԻ Ս̅Բ ԵԿԵՂԵՑԻՍ Ի ՀԱՆԱՆ ԱՐԴ|ԵԱՆՑ ԻՄՈՑ. ՅԻՇԵՑԷՔ ԶԻՍ Ի Ք̅Ս։

Լալայան. Դ. 31.
Լուսանկ. տախտ. XVI, 55

**165. ԽՆՁՈՐԵՍԿ.** Մելիք Փարամազի տան դարբասի կամարակալ քարին. արտաքուստ. 3 տ.



Ի ՎԱԵԼՈՒՄՆ ՄԵԼԻՔ | ՔԱՍՈՒ ՈՐԴԻ ՄԵԼԻՔ ՓԱՐՄԱԶԻՆ. ԹՎԻՆ ։ՌՄՁԵ։